Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 06

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<03>> հուլիսի 2025թ. ք. Երևան

2025 թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում են հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 3 դիմումների քննարկում:
2. Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:
3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:
4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

5. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

6. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաները և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

Անհատ ձեռնարկատեր ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱԿՈԲՅԱՆԻ 02. 06. 2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05262 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, «ԺՈՐԺԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.06.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05231 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՏՐԱՆՍ ԱԿՆԹԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 30.06.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05395 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց անհատ ձեռնարկատեր ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱԿՈԲՅԱՆԻ 02. 06. 2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05262 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, «ԺՈՐԺԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.06.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05231 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՏՐԱՆՍ ԱԿՆԹԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 30.06.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05395 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումներին կից նյութերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱԿՈԲՅԱՆ	4 կողմ, 0 դեմ
«ԺՈՐԺԵՏ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ
«ՏՐԱՆՍ ԱԿՆԹԱՐԹ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիաները և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

Ֆիզիկական անձ ՀԵՆՐԻԽ ՄԱՅԻՍԻ ՅԱԳՈՒՏՅԱՆԻ 10. 06. 2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների

իրականացման ՏՖ N 01379 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և ֆիզիկական անձ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՇԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 01. 07. 2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11130 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ ՀԵՆՐԻԽ ՄԱՅԻՍԻ ՅԱԳՈՒՏՅԱՆԻ 10. 06. 2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 01379 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և ֆիզիկական անձ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՇԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 01. 07. 2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11130 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումներին կից նյութերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՀԵՆՐԻԽ ՄԱՅԻՍԻ ՅԱԳՈՒՏՅԱՆ	4 կողմ, 0 դեմ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՇԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիաները և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

«ՎԱԿՌՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 27.06.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00081 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՆՅՈՒ-ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 02.07.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00069 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ՎԱԿՌՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 27.06.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00081 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին և «ՆՅՈՒ-ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 02.07.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00069 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԱԿՌՈ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ
«ՆՅՈՒ-ԱՎՏՈ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեցին՝ անհատ ձեռնարկատեր ԱՐԹՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ 2025 թվականի հունիսի 6-ի հայտը և հայտին կից փաստաթղթերը և հուլիսի 1-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին և «ԱՎՏՈՋԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հունիսի 10-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

1. Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ անհատ ձեռնարկատեր ԱՐԹՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ 2025 թվականի հունիսի 6-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին՝ Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գ. Ախուրյան, Գյումրու խճուղի, 1-ին փակուղի 3 գործունեության վայրում: 2025 թվականի հուլիսի 1-ին անհատ ձեռնարկատերը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փոստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից:

2. Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ «ԱՎՏՈՋԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հունիսի 10-ի լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին՝ Արարատի մարզ, համայնք Արարատ, ք. Արարատ, Սուրբ Ամենափրկչի փողոց 36/7 գործունեության վայրում: Հայտատուի կողմից ներկայացված արտադրական բազայի ներկայացվող պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև ներկայացրած փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը 2025 թվականի հունիսի 26-ին կազմակերպության գործունեության վայրում իրականացվել է հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից: Հանձնաժողովի անդամները ներկայացրին, որ կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ այն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 5-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 17-րդ կետի պահանջներին, մասնավորապես՝ փորձարկման տեղամասում առկա չէ տեսանկարահանող սարքավորումները և բացակայում է արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին Կարգի Ձև N 6 տեղեկանքի 4-րդ կետով սահմանված օդաճնշարկային կայանքը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐԹՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՖԱՐՅԱՆ	4 կողմ, 0 դեմ
«ԱՎՏՈՋԱՆ» ՍՊԸ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

1) Անհատ ձեռնարկատեր ԱՐԹՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

2) «ԱՎՏՈՋԱՆ» ՍՊ ընկերության հայտը ենթակա է մերժման՝ ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ «ԱՎՏՈՋԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի հունիսի 10-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2025 թվականի հունիսի 27-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի հունիսի 10-ի լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արարատի մարզ, համայնք Արարատ, ք. Արարատ, Սուրբ Ամենափրկչի փողոց 36/7 գործունեության վայրում: 2025 թվականի հունիսի 27-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փոստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈՋԱՆ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա ու լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝ Անհատ ձեռնարկատեր ԼԵՎՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԼԱԼԱՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի հունիսի 9-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հունիսի 27-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի հունիսի 9-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի 1 ներդիր տրամադրելու մասին, իսկ հունիսի 27-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԼԵՎՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԼԱԼԱՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան